ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամը և Գյումրու երիտասարդական նախաձեռնությունների կենտրոնը Երիտասարդների միջազգային օրվան ընդառաջ հայտարարում են երգի մրցույթ:

Ինչ է պետք անել.

1. Երգ գրել:
2. Կատարել երգը և որևէ եղանակով (օրինակ՝ հեռախոսով) տեսանկարել կատարումը: Երգը կարող է կատարել նաև ոչ երգի հեղինակը, բայց, ամեն դեպքում, գնահատվելու է երգը, ոչ թե կատարումը:
3. Ուղարկել կատարումը manukyan@unfpa.org և mariam.gharagyozyan@yic.am էլ-հասցեներին՝ չմոռանալով նամակում նշել հեղինակի/համահեղինակների և, եթե կատարողն ու հեղինակները տարբեր մարդիկ են, նաև կատարողի անուն-ազգանունը, հեռախոսահամարը, տարիքը և հասցեն: Եթե ֆայլը մեծ է, խնդրում ենք ուղարկել հատուկ առցանց ծառայությունների միջոցով (օրինակ՝ www.wetransfer.com)

Հեղինակին/համահեղինակներին/կատարողներին ներկայացվող պահանջները.

1. Հեղինակը/համահեղինակները/կատարողները (այդ թվում՝ երգի խոսքի հեղինակը) պետք է լինեն ՀՀ բնակիչ:
2. Հեղինակը/համահեղինակները/կատարողները մրցույթի մեկնարկի պահին պետք է լինեն 16-ից 30 տարեկան:
3. Հեղինակները/համահեղինակները/կատարողները չպետք է լինեն արհեստավարժ (պրոֆեսիոնալ) երգահաններ/երգիչներ և/կամ գրողներ/բանաստեղծներ:

Երգին ներկայացվող պահանջները.

1. Երգը պետք է գրված լինի 2016 թ. հունվարի 1-ից հետո:
2. Երգը չպետք է ներկայացված լինի հանրությանը կամ մասնակցած լինի որևէ մրցույթի:
3. Երգը պետք է լինի հայերեն լեզվով:
4. Հեղինակը/համահեղինակները կարող են մրցույթին ներկայացնել մինչև երեք երգ:
5. Երգի համար ժանրային սահմանափակում չկա:
6. Ներկայացված երգերը պետք է հանդիսանան տվյալ հեղինակի/համահեղինակների մտավոր սեփականությունը և չխախտեն այլ անձանց հեղինակային իրավունքները՝ համաձայն «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների» մասին ՀՀ օրենքի 65-69 հոդվածների: Մրցույթի կազմակերպիչները պատասխանատվություն չեն կրում որևէ անձի հեղինակային իրավունքների խախտման համար:

Մրցանակները.

- 1-ին մրցանակ՝ 200000 դրամ և հաղթող երգի ձայնագրություն
- 2-րդ մրցանակ՝ 150000 դրամ
- 3-րդ մրցանակ՝ 100000 դրամ
- Հատուկ մրցանակ՝ սոցիալական մեդիայում հանրային համակրանքի համար

Մրցանակաբաշխությունը տեղի կունենա ս. թ. օգոստոսի 12-ին Գյումրի քաղաքում՝ Երիտասարդության միջազգային օրվան նվիրված տոնական համերգի ժամանակ: Հայտերն ուղարկելու **վերջնաժամկետն է 2017 թ. հուլիսի 30-ը, ժամը 17:00**: Վերջնաժամկետից հետո ուղարկված և/կամ ներկայացվող պահանջներին չհամապատասխանող հայտերը չեն դիտարկվելու:

Հարցերի և մանրամասների համար կարող եք գրել էլ. փոստի manukyan@unfpa.org հասցեին կամ զանգահարել (010) 543417, (091) 429029 հեռախոսահամարներով: